ՀՀԿա

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

25 դեկտեմբեր, 2024 թվականի № 94-Լ

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի 2024 թվականի դեկտեմբերի 19-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված N 31/24 գրությունը և հաշվի առնելով Ընկերության կողմից հեռարձակման ենթակա տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության 2025 թվականի տեսալսողական ծրագրի կառուցվածքը և դրա առանձին բաժինների համամասնությունները՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

25 դեկտեմբեր, 2024 թվականի

ք. Երևան

Հավելված 1
Հանրային հեռարձակողի խորհրդի
25 դեկտեմբեր, 2024 թ. N 94-Լ որոշման

Հաստատում եմ՝
Հանրային հեռարձակողի
խորհրդի նախագահ
_____ Ա. Շիրինյան
25 դեկտեմբեր, 2024 թ.

«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի տեսալսողական ծրագրի կառուցվածքը և դրա առանձին բաժինների համամասնությունները

N	Կրթական-մշակութային տեսալսողական ծրագրի առանձին բաժիններ	Տեսալսողական ծրագրի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ, տոկոս)
1	Հոգևոր - Մշակութային լրատվություն	465.0ժ 5.30%
2	Մշակութային հաղորդումներ	1925.0ժ 21.97%
3	Հոգևոր հաղորդումներ	1255.0ժ 14.32%
4	Երաժշտական ծրագրեր և համերգներ	1220.0ժ 13,93%
5	Մանկական հաղորդումներ	1150.0ժ 13.14%
6	Ուսումնական և այլ հաղորդումներ	1165.0ժ 13.29
7	Գիտահանրամատչելի, ուսումնական, վավերագրական և գեղարվեստական կինոնկարներ	1580.0ժ 18.05%
	ԸՆԴԱՄԵՆԸ	**8,760.0**